**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հսկողության համակարգերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-19/18 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 27-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 4.1 կետում <<3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<3 960 000 (երեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ>> բառերով, <<1-ին չափաբաժին՝ առավելագունը՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ>> բառերը՝ <<1-ին չափաբաժին՝ առավելագունը՝ 1 360 000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ>> բառերով, ինչպես նաև Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 7.5 կետ:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ОБЪЯВЛЕНИЕ

### об изменении, внесенное в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменении, внесенное 27 декабря 2019 года в договор № DD-GHTsDzB-19/18, заключенный 12.12.2019 года в результате процедуры закупки под кодом DD-GHTsDzB-19/18 организованной с целью приобретения услуг по системам надзора для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

Причина возникновения изменения: Возникла необходимость добавить объемы услуг, предусмотренных договором.

Описание изменения: В пункте 4.1 договора заменить слова <<3 600 000 (три миллиона шестьсот тысяч) РА драмов»  словами <<3 960 000 (три миллиона девятьсот шестьдесят тысяч) РА драмов, « слова 1-ый лот- максимально 1 000 000 (один миллион) РА драмов словами 1-ый лот- максимально 1 360 000 (один миллион триста шестьдесят тысяч) РА драмов>>, а также подтвердить Приложение 2 Договора под заголовком <ГРАФИК ПЛАТЕЖЕЙ> в новом редактировании, согласно Приложению 1 данного соглашения.

Обоснование изменения: Статья 7.5 Контракта.

Заказчик: **Судебный департамент**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**12.12.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/18» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «27» դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅ ԹԻ ԻՆՎԵՍԹԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Պետրոսովի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 12.12.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/18» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները, ինչով պայմանավորված՝ Պայմանագրի 4.1 կետում <<3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<3 960 000 (երեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ>> բառերով, <<1-ին չափաբաժին՝ առավելագույնը՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ>> բառերը՝ <<1-ին չափաբաժին՝ առավելագույնը՝ 1 360 000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ>> բառերով, ինչպես նաև Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

***«ԱՅ ԹԻ ԻՆՎԵՍԹԻՆԳ» ՍՊԸ***

Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջ 2, բն 36

Հ/Հ՝ 2052822145891001

ՀՎՀՀ՝ 03551934

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գ. Պետրոսով

(ստորագրություն)

Կ.Տ.

**Հավելված N 1**
**« 27» դեկտեմբերի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի**

(Հավելված N 2
«12» դեկտեմբերի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | |
| | | | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79711140/22 | Հսկողության համակարգերի ծառայություններ | 1 360 000 | 1 360 000 |
| 2 | 79711140/20 | Հսկողության համակարգերի ծառայություններ | 1 300 000 | 1 300 000 |
| 3 | 79711140/21 | Հսկողության համակարգերի ծառայություններ | 1 300 000 | 1 300 000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
***«ԱՅ ԹԻ ԻՆՎԵՍԹԻՆԳ» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
Սարալանջ 2, բն 36
Հ/Հ՝ 2052822145891001
ՀՎՀՀ՝ 03551934
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գ. Պետրոսով

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.